ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/40654-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Խ-073-26.10.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ եզրակացությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1331 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆ-ՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Խ-073-26.10.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ ներդրվում է կենսաթոշակների չափերի ավելացման նոր մեխանիզմ՝ փոխկապակցված սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) և միջին ամսական անվանական աշխատավարձի ավելացմանը:

Ընդ որում, ըստ նախագծի հիմնավորման՝ այդպիսով երկրի սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների և կենսաթոշակի չափի միջև կստեղծվի կապ՝ էապես սահմանափակելով կառավարության հայեցողական լիազորությունների շրջանակը:

Ըստ էության, նախագծով ամրագրվում է կառավարության՝ ինֆլյացիայի առկայության դեպքում կենսաթոշակների (նպաստների) պարտադիր ավելացման ուղղակի պարտավորությունը և ավելացման չափը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ կենսաթոշակների (նպաստների) չափերի ավելացումը կառավարության համար օրակարգային խնդիր է, ինչն արտացոլված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրում:

Մասնավորապես, կենսաթոշակի (նպաստի) չափի և սպառողական գների ինդեքսի ցուցանիշների միջև փոխկապվածության ապահովումը աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականություն է, որի ռազմավարական նպատակն արտացոլված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրի «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառ» բաժնի 4.6-րդ կետում:

Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանի 02.04.2014 թ. թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ ... սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը

սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը, նաև դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

... Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:»:

Ըստ այդմ, սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորումը դիտարկելով որպես կարևորագույն խնդիր, այնուհանդերձ գտնում ենք, որ պետության տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների հաշվառմամբ, խնդրո առարկա իրավունքի իրացումն ապահովող քաղաքականությունը, գործող կարգն արդարացված են, քանի որ դրանցում հայեցողության սահմանները պայմանավորված են մի կողմից՝ պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով, որն էլ հանդիսանում է ոլորտի ճկունության անհրաժեշտությունը և ֆինանսական կայունությունը պայմանավորող գործոն:

Այս տեսանկյունից խնդրահարույց է ինդեքսավորման կարգն օրենքով սահմանելու մոտեցումը, ինչն առաջարկվում է նախագծերի փաթեթով: Նպատակահարմար է կենսաթոշակների չափերի ավելացման համար տարեկան պարտադիր ինդեքսավորումն օրենքով նախատեսելու հարցը քննարկել կենսաթոշակների չափերի ավելացման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ռազմավարական նպատակի իրականացումից հետո: Ընդհանուր առմամբ կարող են քննարկվել ոչ թե կենսաթոշակների (նպաստների) ավելացման (այդ թվում՝ ինդեքսավորման) մեխանիզմները, այլ ավելացման հիմքերը (դեպքերը) օրենքով ամրագրելու հարցը՝ կառավարությանը վերապահելով տվյալ տարվա սոցիալ-տնտեսական հնարավորությունների շրջանակում բարձրացման կոնկրետ չափը և մեխանիզմները սահմանելու իրավասությունը:

Ելնելով վերոգրյալից՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը նպատակահարմար չէ և առաջարկվում է նախագծերով լրացվող օրենքների գործող հոդվածները թողնել անփոփոխ:

Հարկ ենք համարում նշել, որ նախագծերով առաջարկվող փոփոխությունները կհանգեցնեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման և 2021 թվականը որպես բազա դիտարկելու դեպքում տարվա կտրվածքով լրացուցիչ ծախսը կկազմի շուրջ 12.3 մլրդ դրամ, ուստի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրենքների նախագծերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պետք է ընդունի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է կարգավորել աշխատանքային և զինվորական կենսաթոշակների ինդեքսավորման, ինչպես նաև ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նշանակված նպաստների ինդեքսավորման հետ կապված հարաբերությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող նպաստների գումարները, ինչպես նաև բոլոր տեսակի կենսաթոշակները եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով համարվում են նվազեցվող եկամուտներ, հայտնում ենք, որ նախագծերի ընդունումը չի հանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի վրա ազդեցությանը՝ հայտնում ենք, որ, հաշվի առնելով բյուջետային գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առաջարկվող գնաճի թիրախային մակարդակի 4±1,5 տոկոս առաջարկը, նախագծերով առաջարկվող փոփոխությունները կհանգեցնեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման և 2021 թվականը որպես բազա դիտարկելու դեպքում տարվա կտրվածքով լրացուցիչ ծախսը կկազմի շուրջ 12.3 մլրդ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1331 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Խ-073-26.10.2021-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Խ-073-26.10.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) 16.1-ին հոդվածով.

«*Հոդված 16.1 Աշխատանքային կենսաթոշակների ինդեքսավորումը* .

1. Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը եւ նվազագույն կենսաթոշակի չափը ինդեքսավորվում են յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա դրությամբ սպառողական գների ինդեքսի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխության (աճի) չափով:

2. Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը ինդեքսավորվում է յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա միջին ամսական անվանական աշխատավարձի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ փոփոխության (աճի) չափով:

3. Սույն հոդվածի իմաստով բազային տարի է համարվում բյուջետային տարվան նախորդող օրացուցային տարին:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել 23.1-ին հոդվածով.

«*Հոդված 23.1 Զինվորական կենսաթոշակների ինդեքսավորումը.*

1. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը ինդեքսավորվում է յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա դրությամբ սպառողական գների ինդեքսի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխության (աճի) 50 տոկոսի չափով:

2. Զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը ինդեքսավորվում են յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա միջին ամսական անվանական աշխատավարձի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխության (աճի) չափով:

3. Սույն հոդվածի իմաստով բազային տարի է համարվում բյուջետային տարվան նախորդող օրացուցային տարին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Խ-073[1]-26.10.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքը լրացնել նոր՝ 32.2 հոդվածով՝

«*Հոդված 32.2 Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի եւ կերակրողին կորցնելու դեպքում նշանակված նպաստների ինդեքսավորումը*

Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը ինդեքսավորվում են յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա դրությամբ սպառողական գների ինդեքսի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխության (աճի) չափով:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայացվող նախագծերի նպատակը կենսաթոշակառուների և տարեց բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարելավումն է:

2. Առկա իրավիճակը և խնդիրները.

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի հիման վրա, իսկ զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի հիման վրա:

Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթշակի չափը, զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Կառավարությունն է սահմանում նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը, ինչպես նաև նվազագույն կենսաթոշակի չափը:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կառավարությունն է սահմանում նաև ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը:

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝

1) աշխատանքային կենսաթոշակի չափը և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը կազմում է 18000 դրամ.

2) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար կազմում է 950 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ.

3) զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը կազմում է 1600 դրամ.

4) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը կազմում է՝

ա. առաջին խմբի հաշմանդամի համար՝ 40000 դրամ,

բ. երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 30000 դրամ,

գ. երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 27000 դրամ.

5) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը կազմում է 27000 դրամ:

6) ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը, նվազագույն կենսաթոշակի չափը կազմում է 26500 դրամ:

Այսինքն, համաձայն գործող իրավակարգավորումների՝ կենսաթոշակի չափը (կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական ցուցանիշները, այդ թվում՝ նվազագույն կենսաթոշակի չափը) որոշում է կառավարությունը, սեփական հայեցողությամբ՝ չունենալով որևէ ուղղակի պարտավորություն և հաշվի առնելով առկա ռեսուրսներն ու ծախսային առաջնահերթությունները:

Արդյունքում, ունենում ենք մի իրավիճակ, երբ առկա է կենսաթոշակառուների աղքատացման ռիսկ, երբ չնայած արձանագրված գնաճին՝ կենսաթոշակների չափերը չեն ավելանում, ինչը նշանակում է սպառման կրճատում կենսաթոշակառուի համար:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ընդունել ներկայացված նախագծերը:

3. Առաջարկվող լուծումները

Ներկայացված նախագծերն ընդունելու արդյունքում կսահմանվի, որ աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափերը ինդեքսավորվում են յուրաքանչյուր տարի:

Ընդ որում, կենսաթոշակների չափերի ինդեքսավորումը իրականացվելու է կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական ցուցանիշները, այդ թվում՝ նվազագույն կենսաթոշակի չափը ինդեքսավորելու միջոցով՝ հիմք ընդունելով սպառողական գների ինդեքսը և միջին անվանական աշխատավարձի աճի ցուցանիշը:

Ընդ որում, հաշվի առնելով կենսաթոշակների չափերը հաշվարկելու կանոնները, ինչպես նաև կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական ցուցանիշներից յուրաքանչյուրի էությունը, առաջարկվում է.

1. Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը, նվազագույն կենսաթոշկի չափը, ինչպես նաև ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը ինդեքսավորել սպառողական

գների ինդեքսի փոփոխության (աճի) չափով (քանի որ այս ցուցանիշներն ունեն սոցիալական գործառույթ և ըստ էության ապահովում են երաշխավորված մինիմում),

2. Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը ինդեքսավորվել սպառողական գների ինդեքսի փոփոխության (աճի) 50 տոկոսի չափով (պայմանավորված է Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգով),
3. Աշխատանքային ստաժի և զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակների չափերը ինդեքսավորել միջին ամսական անվանական աշխատավարձի փոփոխության (աճի) չափով (քանի որ այս ցուցանիշներն ըստ էության ապահովում են կորցրած եկամտի փոխհատուցում):

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագիծն ընդունվելու դեպքում կապ կստեղծվի երկրի սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների (ՍԳԻ և միջին ամսական աշխատավարձ) և կենսաթոշակի չափի միջև՝ էապես սահմանափակելով կառավարության հայեցողական լիազորությունների շրջանակը:

Ընդ որում, նախագծի ընդունումը որևէ կերպ չի սահմանափակելու Կառավարության իրավասությունը՝ ապահովել կենսաթոշակների չափերի առաջանցիկ աճ, քանի որ շարունակվելու է կառավարության լիազորությունների շրջանակում մնալ վերը նշված ցուցանիշները սահմանելու լիազորությունը (նախագծով, ըստ էության, առաջարկվում է սահմանել կենսաթոշակների չափերի աճի նվազագույն ցուցանիշ):

Իսկ ՍԳԻ-ի կամ միջին ամսական անվանական աշխատավարձի փոփոխության բացասական ցուցանիշների դեպքում կգործեն օրենքի համապատասխան դրույթները (հոդված 16, 19), որոնց համաձայն՝ Աշխատանքային և Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը չեն կարող պակաս լինել նախկինում սահմանված չափերից:

Վերը նշված մոտեցումները համահունչ են նաև << Աժ հավանությանն արժանացած՝ կառավարության ծրագրից:

Մասնավորապես, Ծրագրի՝ «4.6 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնի համաձայն՝ Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցնել համապատասխանաբար պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին, ինչպես նաև վերացնել ծայրահեղ աղքատությունը:

Վերը նշված նպատակադրումները ենթադրում են նաև կենսաթոշակի չափի և սպառողական գների ինդեքսի ցուցանիշների միջև փոխկապակցվածություն կամ, այլ կերպ ասած, կենսաթոշակների ինդեքսացիա:

Բացի այդ, հարկ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-1142 որոշմամբ նշել է, որ «Միջազգային պրակտիկայում ի սկզբանե թոշակային համակարգի առանցքային խնդիր է համարվել այն, որ կենսաթոշակները չպետք է կորցնեն իրենց գնողունակությունը: Հարցն այն է, որ կենսաթոշակի համար անհրաժեշտ միջոցի ձեւավորման եւ սոցիալական ապահովության իրավունքի իրացման միջեւ առկա է ժամանակի գործոնի ազդեցությունը: Այն հաշվի չառնելու դեպքում անհնարին կլինի համարժեք միջոցներ կուտակել եւ երաշխավորել մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը: Բացի դրանից, կուտակային վճարների ամբողջ գումարի տարեկան գնաճով ճշգրտումն այդ գումարներն ամբողջությամբ հետ ստանալու իրավունքի պաշտպանության նպատակ է հետապնդում եւ օրենքի կարգավորման առարկա է: Միաժամանակ, այս հարցում օրենքով նախատեսված երաշխիքների առկայությունը համակարգի հուսալիության կարեւորագույն գրավականներից է»,

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որեւէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձեւակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել եւս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով

իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաեւ, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ: Հետևաբար կենսաթոշակային և նպաստային համակարգի ինդեքսավորումը ոչ միայն պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլև << Սահմանադրական դատարանի և առհասարակ Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորման պետության իմպերատիվ պարտականության կատարման տեսանկյունից հանդիսանում է կարևորագույն ձեռքբերում:

Որպես ինդեքսավորման կատարման անհրաժեշտություն՝ վերաբերելի է նաև ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի հաշվակված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով հետևյալն է[1]՝

Պարենային զամբյուղի արժեքը	
Տարեկան	431 796.6 դրամ
ամսական	35 983.0 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	
Տարեկան	798 823.7 դրամ (գործակից 1.85)
ամսական	66 568.6 դրամ

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2019 թ. ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից 5184 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ծևավորված սպառողական զամբյուղի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով ունի հետևյալ պատկերը[2].

	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
Պարենային զամբյուղի ամսական արժեքը	27 772.7 դրամ	30 927.4 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը	51 379.5 դրամ	57 215.7 դրամ (գործակից 1.85 1)

Իսկ արդեն ըստ ԱՎԿ հաջորդ վերաբերելի հրապարակման՝ 2-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 37 861 դրամ, սպառողական զամբյուղների արժեքը՝ 70 044 դրամ:

Ամբողջացնելով առկա իրավական կարգավորումները, ներկայացված փաստերն ու տվյալները, ակնհայտ է դառնում ինդեքսավորման կիրառման անհրաժեշտությունը: